

Կոտայքի մարզպետարանում շարունակվում է շտաբային ուսումնական ծրագրերը

Կոտայքի մարզպետարանում «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը Գառնի համայնքում ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով շտաբային ուսումնական ծրագրի օրն էր՝ գործնական փուլը:

Խաղարկվում էր Կոտայքի մարզի Գառնի համայնքում առավոտյան ժամը 8.00-ին գրանցված երկրաշարժ և ըստ այդմ բնակչության պաշտպանության կազմակերպման ուղղությամբ իրականացվող քայլերը:

Ըստ սցենարի, ԱԻՆ Փրկարար Ծառայության Կոտայքի մարզային ճԿԿ-ից ստացված ազդարարումից հետո Կոտայքի մարզպետը հրավիրել է «ազդարարման հավաք», փոխանցել գրանցված երկրաշարժի մասին առաջին տեղեկատվությունը. համապատասխան ստորաբաժանումներին տրվել է հաճնարարականներ:

Խմբային աշխատանքից հետո ծառայությունների ղեկավարները մարզպետին զեկուցեցին հնարավոր երկրաշարժի մասին ստացված տվյալներն՝ ըստ ստորաբաժանումների:

Մարզպետարանի բոլոր ստորաբաժանումների, ԱԻՆ, ՊՆ, Կոտայքի մարզային փրկարարական վարչության, ոստիկանության մարզային վարչության, համայնքների ղեկավարների մասնակցությամբ տեղի ունեցավ քննարկում, մատնանշվեցին հնարավոր երկրաշարժի պարագայում ճիշտ կողմնորոշման և արագ արձագանքման ուղղությամբ նախատեսվող քայլերը: